

Հավելված
ՀՀ կառավարության 2022 թվականի
օգոստոսի 4-ի N 1218 - Ն որոշման

«Հավելված N 1.2
ՀՀ կառավարության 2019 թվականի
օգոստոսի 8-ի N 1025 - Ն որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**

ՍՏՈՒԳԱԹԵՐԹ

**ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԿԱՄ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ՆԱՎԹԱՅԻՆ ԳԱՋՈՎ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎՐԱ ԳԱՋԱԲԱԼՈՆԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ
ՏԵՂԱԴՐՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԳԱՋԱԲԱԼՈՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՎԿԱՅԱԳՐՄԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ**

« ____ » _____ 20 թ.

Ստորաբաժանման անվանումը	Գտնվելու վայրը	հեռախոսահամարը
_____ պաշտոնը	_____ անունը, հայրանունը, ազգանունը	
_____ պաշտոնը	_____ անունը, հայրանունը, ազգանունը	
_____ պաշտոնը	_____ անունը, հայրանունը, ազգանունը	
Ստուգման ամսաթիվը	սկիզբը _____	ավարտը _____
Ստուգման հիմքը		

Տնտեսավարող սուբյեկտի անվանումը

--	--	--	--	--	--	--	--	--	--

ՀՎՀՀ

Պետական ռեգիստրի վկայականի կամ գրանցման համարը

Տնտեսավարող սուբյեկտի իրավաբանական հասցեն	հեռախոսահամարը
---	----------------

Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ լիազորված անձի անունը, ազգանունը, հայրանունը,
հեռախոսահամարը

Ստուգվող օբյեկտի անվանումը, գործունեության տեսակը (ները)

Ստուգվող օբյեկտի ղեկավարի կամ լիազորված անձի անունը, ազգանունը,
հայրանունը, հեռախոսահամարը

Տնտեսական գործունեության տեսակի դասակարգչի ծածկագիրը

Ստուգման հիմքը _____ ում կողմից _____ երբ է տրված _____

Ստուգման նպատակը / ընդգրկված հարցերի համարները

Գործունեության իրականացման վայրը (վայրերը)	
Լիցենզիայի և լիցենզիայի ներդիրի համարը, տրման ամսաթիվը	

ՀԱՐՑԱՇԱՐ

ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԿԱՄ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ՆԱԿԹԱՅԻՆ ԳԱԶՈՎ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎՐԱ ԳԱԶԱԲԱԼՈՆԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԳԱԶԱԲԱԼՈՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՎԿԱՅԱԳՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ

NN ը/կ	Հարցը	Այո	Ոչ	Զ/Պ	Միավոր	Հղում նորմատիվ իրավական ակտին	Ստուգման եղանակը	Մեկնաբանություն
1	Առկա են սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության լիցենզիա և ըստ գործունեության տեսակի՝ լիցենզիայի ներդիր (ներդիրներ)				3	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 1998-Ն որոշում, Հավելված N 1, 1-ին և 5-րդ կետեր, «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենք, հոդված 26.1, 1-ին մաս	փաստաթղթային	
2	Լիցենզավորված անձը գործունեությունն իրականացնում է միայն լիցենզիայում նշված վայրում				2	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 1998-Ն որոշում, Հավելված N 1, 4-րդ կետ	փաստաթղթային, տեսազննություն	
3	Գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցներում տեղադրվում և վկայագրվում են միայն սահմանված տեսակի գազաբալոնները				2	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 2011-Ն որոշման հավելվածի 5-րդ կետ	փաստաթղթային, տեսազննություն	
4	Ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնների և գազաբալոնային սարքավորումների ամրացման տեղերում առկա չեն ճաքեր, մեխանիկական վնասվածքներ, միջանցիկ քայքայումներ (կոռոզիաներ)				2	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 2011-Ն որոշման հավելվածի 6-րդ կետի 1-ին ենթակետ	տեսազննություն	
5	Տեղադրվող գազաբալոնները համապատասխանում են «Ավելցուկային ճնշման տակ աշխատող սարքավորումների անվտանգության մասին» ՄՄ ՏԿ 032/ 2013 Մաքսային միության տեխնիկական կանոնակարգին, ՀՍՏ 279-2007				2	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 2011-Ն որոշման հավելվածի 7-րդ կետ	փաստաթղթային, տեսազննություն	

	«Ավտոմոբիլային տրանսպորտային միջոցներում որպես շարժիչային վառելիք օգտագործելու համար սեղմված բնական գազի բարձր ճնշման բալոններ» և ՀՍ ԻՍՕ 10464 «Պողպատե եռակցված բազմակիրառելի բալոններ հեղուկացված գազի համար» չափորոշիչների (ստանդարտների) պահանջներին					
6	Ավտոտրանսպորտային միջոցներում տեղադրված յուրաքանչյուր գազաբալոն ունի փական, որն համալրված է խողովակաշարի խզման կամ մեխանիկական վնասվածքների դեպքում գազաբալոնից գազի հոսքի դադարեցման, ինչպես նաև բարձր ճնշման առկայության դեպքում ճնշումն իջեցնող սարքվածքով			2	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 2011-Ն որոշման հավելվածի 9-րդ և 10-րդ կետեր	փաստաթղթային, տեսազննություն
7	Մետաղական գազամուղները պատրաստված են պողպատյա կամ պղնձյա անկար խողովակներից			2	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 2011-Ն որոշման հավելվածի 11-րդ կետ	փաստաթղթային, տեսազննություն
8	Բարձր ճնշման գազամուղների միացությունները ունեն ավտոտրանսպորտային միջոցների շարժումը և մանևրները, ինչպես նաև շրջանակի, բեռնահարթակի կամ թափքի շեղվածքների ժամանակ դրանց ճկունությունը ապահովող կոմպենսացիոն գալարներ			2	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 2011-Ն որոշման հավելվածի 12-րդ կետ	փաստաթղթային, տեսազննություն
9	Գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների նավթային վառելիքով և գազով շահագործվելու հնարավորություն ունեցող գազաբալոնային սարքավորումները ներառում են տարբեր տեսակի վառելիքով աշխատելու փոխարկիչ կամ երկու տեսակի վառելիքի (գազային և նավթային) միաժամանակյա			2	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 2011-Ն որոշման հավելվածի 13-րդ կետ	փաստաթղթային, տեսազննություն

	մատուցումը բացառող ավտոմատ բլոկավորող համակարգ					
10	Ավտոբուսի տանիքին տեղադրված գազաբալոններն արևի ուղիղ ճառագայթներից, ձյան և անձրևի տեղումներից պաշտպանված են պատյանով, միաժամանակ ապահովված է հասանելիություն գազաբալոնների փականների՝ դրանց հերմետիկությունը ստուգելու նպատակով		2	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 2011-Ն որոշման հավելվածի 15-րդ կետ	փաստաթղթային, տեսազննություն	
11	Գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցներում լցավորման փողոակը տեղակայված է այնպես, որ այն դուրս չի գալիս գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների թափքի սահմաններից		2	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 2011-Ն որոշման հավելվածի 16-րդ կետ	փաստաթղթային, տեսազննություն	
12	Ավտոտրանսպորտային միջոցների գազաբալոնային սարքավորման ծախսային, մայրուղային, լցավորման փականները սահմանված ճնշումների դեպքում ապահովում են ներքին և արտաքին հերմետիկություն		2	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 2011-Ն որոշման հավելվածի 17-րդ կետ	փաստաթղթային, տեսազննություն	
13	Ավտոտրանսպորտային միջոցներում գազաբալոնային սարքավորումներ տեղադրելուց հետո սահմանված ճնշումների տակ փորձարկվում են դրանց սնման համակարգի ագրեգատների և հանգույցների միացումների հերմետիկությունն ու ամրությունը		2	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 2011-Ն որոշման հավելվածի 18-րդ կետ	փաստաթղթային, տեսազննություն	
14	Տեղադրված գազաբալոնային սարքավորման անվտանգության պահանջներին համապատասխանության սահմանված ձևի վկայականը, ինչպես նաև գազալցակայաններում նույնականացման համար նախատեսված բառ-կոդը կամ էլեկտրոնային չիպը տրամադրվում են ավտոտրանսպորտային միջոցում		2	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 2011-Ն որոշման հավելվածի 19-րդ կետ	փաստաթղթային, տեսազննություն	

	գազաբալոնային սարքավորումների տեղադրելուց, գազավառելիքային սնման համակարգի հերմետիկության ճնշափորձարկումից ու շարժիչի աշխատանքի կարգավորումից հետո և դրա արդյունքում					
15	Շահագործման մեջ գտնվող, բայց անձնագիր կամ տեխնիկական տեղեկաթերթիկ չունեցող գազաբալոնների համար վկայագրման դրական արդյունքների դեպքում վկայագրող կազմակերպությունը լրացնում է սահմանված ստանդարտի տեղեկաթերթիկը			2	«Կառավարության 09.12.2021թ. թիվ 2011-Ն որոշման հավելվածի 20-րդ կետ	փաստաթղթային, տեսազննություն
16	Շահագործվող գազաբալոնները վկայագրվում են ՀՍ 279-2007 «Ավտոմոբիլային տրանսպորտային միջոցներում որպես շարժիչային վառելիք օգտագործելու համար սեղմված բնական գազի բարձր ճնշման բալոններ», ԻՍՕ 18119:2018 «Գազի բալոններ. Պողպատե և ալյումինե համահավաճքից անկարան գազի բալոններ. Պարբերական հսկողություն և փորձարկումներ» և ՀՍ ԻՍՕ 10464 «Պողպատե եռակցված բազմակիրառելի բալոններ հեղուկացված գազի համար» չափորոշիչներով (ստանդարտներով) սահմանված կարգով			2	«Կառավարության 09.12.2021թ. թիվ 2011-Ն որոշման հավելվածի 21-րդ կետ	փաստաթղթային, տեսազննություն
17	Գազաբալոնները վկայագրման և գազավառելիքային սնման համակարգը ճնշափորձարկման սահմանված ձևի վկայականը, ինչպես նաև գազալցակայաններում նույնականացման համար նախատեսված բառ-կողը կամ էլեկտրոնային չիպը տրամադրվում են գազաբալոնային սարքավորումների պարբերական վկայագրումից հետո և դրա արդյունքում			2	«Կառավարության 09.12.2021թ. թիվ 2011-Ն որոշման հավելվածի 23-րդ կետ	փաստաթղթային, տեսազննություն

18	Անընթեռնելի արտադրման տարեթվով, շահագործման ավարտված ժամկետով, առկա վնասվածքներով, կոռոզիայով, ճաքերով, խոռոչներով, դեֆորմացիայով, բալոնի իրանից շերտի անջատմամբ գազաբալոնների վկայագրում չի իրականացվում			2	«Վկայագրության 09.12.2021թ. թիվ 2011-Ն որոշման հավելվածի 24-րդ և 25-րդ կետեր	փաստաթղթային, տեսազննություն	
19	Անընթեռնելի արտադրման տարեթվով, շահագործման ավարտված ժամկետով, առկա վնասվածքներով, կոռոզիայով, ճաքերով, խոռոչներով, դեֆորմացիայով, բալոնի իրանից շերտի անջատմամբ գազաբալոնները խոտանվում են՝ գազաբալոնի պատի գայլիկոնային ծակման եղանակով			2	«Վկայագրության 09.12.2021թ. թիվ 2011-Ն որոշման հավելվածի 24-րդ և 25-րդ կետեր	փաստաթղթային, տեսազննություն	
20	Լիցենզավորված կազմակերպությունը միացած է գազաբալոնային տրանսպորտային միջոցներին և գազաբալոններին վերաբերող տվյալների էլեկտրոնային շտեմարանին			3	«Վկայագրության 09.12.2021թ. թիվ 2011-Ն որոշման հավելվածի 26-րդ և 29-րդ կետեր	փաստաթղթային, տեսազննություն	
21	Լիցենզավորված անձի կողմից գազաբալոնները տեղադրելու և (կամ) պարբերական վկայագրման աշխատանքներն ավարտելուց հետո ավտոտրանսպորտային միջոցի և գազաբալոնների տվյալները մուտքագրվում են լիազոր մարմնի էլեկտրոնային շտեմարան			3	«Վկայագրության 09.12.2021թ. թիվ 2011-Ն որոշման հավելվածի 27-րդ կետ, «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենք, հոդված 26.1, 2-րդ մաս	փաստաթղթային, տեսազննություն	
22	Գազաբալոնների պարբերական հերթական վկայագրման ժամկետը նշող փաստաթղթերը ձևակերպվել են, և ավտոտրանսպորտային միջոցի ու գազաբալոնների տվյալները մուտքագրվել են էլեկտրոնային շտեմարան գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման արդյունքների հիման վրա			4	«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենք, հոդված 26.1, 2-րդ մաս	փաստաթղթային, տեսազննություն	

23	Սահմանված բոլոր տվյալները մուտքագրվում են էլեկտրոնային շտեմարան				2	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 2011-Ն որոշման հավելվածի 30-րդ կետ	փաստաթղթային, տեսազննություն	
24	Սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցներում գազաբալոնային սարքավորումներ տեղադրող և (կամ) գազաբալոններ պարբերաբար վկայագրող կազմակերպությունների արտադրական բազաներին ներկայացվող պահանջները							
24.1	Գազաբալոնային սարքավորումներն ավտոտրանսպորտային միջոցներում տեղակայելու տեղամասը առնվազն 72 քառակուսի մետր չափերով է և նվազագույնը 6 մետր լայնությամբ				3	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 1998-Ն որոշում, Հավելված N 1, 16-րդ կետի 1 ենթակետ	փաստաթղթային, տեսազննություն	
24.2	Գազաբալոնները պարբերաբար վկայագրելու և գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգերը փորձարկելու տեղամասը առնվազն 72 քառակուսի մետր չափերով է և նվազագույնը 6 մետր լայնությամբ				3	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 1998-Ն որոշում, Հավելված N 1, 16-րդ կետի 2 ենթակետ	փաստաթղթային, տեսազննություն	
24.3	Ճնշակային տեղամասը առնվազն 15 քառակուսի մետր մակերեսով է				3	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 1998-Ն որոշում, Հավելված N 1, 16-րդ կետի 3 ենթակետ	փաստաթղթային, տեսազննություն	
24.4	Տեղադրման և փորձարկման տեղամասերը հագեցված են տեսանկարահանող սարքավորումներով				3	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 1998-Ն որոշում, Հավելված N 1, 17-րդ կետ	փաստաթղթային, տեսազննություն	
24.5	Տեղադրման տեղամասի բարձրությունը բավարարում է սահմանված նվազագույն չափերին (աղյուսակ N 1)				3	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 1998-Ն որոշում, Հավելված N 1, 18-րդ կետ	փաստաթղթային, տեսազննություն	
24.6	Գազաբալոնները պարբերաբար վկայագրելու և գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգերը փորձարկելու տեղամասի (փորձարկելու տեղամաս) մասնաշենքի շինության բարձրությունը առնվազն 4.2 մետր է				3	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 1998-Ն որոշում, Հավելված N 1, 23-րդ կետ	փաստաթղթային, տեսազննություն	

24.7	Փորձարկելու տեղամասը կահավորված է սեղմված բնական գազի բացթողման և գազաբալոնները գազազերծելու կետերով				3	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 1998-Ն որոշում, Հավելված N 1, 24-րդ կետ	փաստաթղթային, տեսազննություն	
24.8	Սեղմված օդի կուտակման համակարգը (ճնշակային տեղամաս) տեղաբաշխված է առանձին (մեկուսացված) շինությունում				4	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 1998-Ն որոշում, Հավելված N 1, 25-րդ կետ	փաստաթղթային, տեսազննություն	
25	Գազաբալոնները վկայագրելու տեղամասը հագեցված է արտադրական բազայի հետևյալ տեխնոլոգիական սարքավորումներով.							
25.1	Գազաբալոնների հիդրավլիկ փորձարկման կայանք՝ թվային ճնշաչափով				3	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 1998-Ն որոշում, Հավելված N 1, Ձև 6, «Ա» կետ, 1 ենթակետ	տեսազննություն	
25.2	Գազաբալոնների փականների ու անցումային կցիչների ապամոնտաժման ու մոնտաժման կայանք				3	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 1998-Ն որոշում, Հավելված N 1, Ձև 6, «Ա» կետ, 2 ենթակետ	տեսազննություն	
25.3	Կշեռք				1	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 1998-Ն որոշում, Հավելված N 1, Ձև 6, «Ա» կետ, 3 ենթակետ	տեսազննություն	
25.4	Օդաճնշակային կայանք և կուտակիչներ				2	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 1998-Ն որոշում, Հավելված N 1, Ձև 6, «Ա» կետ, 4 ենթակետ	տեսազննություն	
25.5	Գազաբալոն տեղափոխելու սայլակ				1	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 1998-Ն որոշում, Հավելված N 1, Ձև 6, «Ա» կետ, 5 ենթակետ	տեսազննություն	
25.6	Փականագործական գործիքների հավաքածու				1	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 1998-Ն որոշում, Հավելված N 1, Ձև 6, «Ա» կետ, 6 ենթակետ	տեսազննություն	
25.7	Գազաբալոնների տեղափոխման բռնիչ				1	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 1998-Ն որոշում, Հավելված N 1, Ձև 6, «Ա» կետ, 7 ենթակետ	տեսազննություն	
26	Գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգը ճնշափորձարկելու տեղամասը հագեցված է արտադրական բազայի հետևյալ տեխնոլոգիական սարքավորումներով.							
26.1	Գործիքապահոց կողասեղան՝ հատուկ գործիքների համար				1	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 1998-Ն որոշում, Հավելված N 1, Ձև 6, «Բ» կետ, 1 ենթակետ	տեսազննություն	

26.2	Դարակաշար			1	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 1998-Ն որոշում, Հավելված N 1, Ձև 6, «Բ» կետ, 2 ենթակետ	տեսազննություն	
26.3	Սեղմված օդի կուտակիչ			2	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 1998-Ն որոշում, Հավելված N 1, Ձև 6, «Բ» կետ, 3 ենթակետ	տեսազննություն	
26.4	Ճնշակային տեղակայանք			2	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 1998-Ն որոշում, Հավելված N 1, Ձև 6, «Բ» կետ, 4 ենթակետ	տեսազննություն	
26.5	Վակուումային տեղակայանք			2	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 1998-Ն որոշում, Հավելված N 1, Ձև 6, «Բ» կետ, 5 ենթակետ	տեսազննություն	
27	Գազաբալոնային սարքավորումներ տեղադրելու և (կամ) պարբերաբար վկայագրելու աշխատանքները իրականացվում են բանվորական և ինժեներատեխնիկական անձնակազմի մասնագիտական որակավորում ստացած անձինք, որոնց մասնագիտական որակավորման փաստաթղթերը կամ փաստաթղթերի պատճենները առկա են			4	ՀՀ կառավարության 09.12.2021թ. թիվ 1998-Ն որոշում, Հավելված N 1, 8-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերություն և 2-րդ ենթակետի «դ» պարբերություն	փաստաթղթային	

1.	«Այո»-առկա է, համապատասխանում է նորմատիվ իրավական ակտերի պահանջներին, ահպանված են նորմատիվ իրավական ակտերի պահանջները	V		
2.	«Ոչ»-բացակայում է, չի համապատասխանում, չի բավարարում նորմատիվ իրավական ակտերի պահանջներին, առկա են խախտումներ		V	
3.	«Զ/Պ»-չի պահանջվում			V

Տվյալ ստուգաթերթը կազմվել է հետևյալ նորմատիվ փաստաթղթերի հիման վրա՝

- «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենք.
- ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզավորման կարգը և լիցենզիայի և լիցենզիայի ներդիրի ձևերը հաստատելու մասին» N 1998-Ն որոշում.
- ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի «Սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և գազաբալոնների պարբերական վկայագրման կարգը և պարբերականությունը սահմանելու, ՀՀ կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի N 2388-Ն, 2006

թվականի հոկտեմբերի 19-ի N 1582-Ն որոշումները ուժը կորցրած ճանաչելու և 2021 թվականի ապրիլի 22-ի N 634-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2011-Ն որոշում:

Աղյուսակ N 1

NN ը/կ	Տրանսպորտային միջոցի տեսակը	Տարածքի չափերը
1.	Թեթև մարդատար ավտոմոբիլների, 9-17 նստատեղ ունեցող ավտոբուսների (միկրոավտոբուսների) և մինչև 1.5 տոննա բեռնատարողության ավտոմոբիլների համար	4,2 մետրից ոչ պակաս
2.	Մինչև 8.5 մետր երկարություն և 2.5 մետր լայնություն ունեցող ավտոբուսների ու բեռնատար ավտոմոբիլների համար	5 մետրից ոչ պակաս

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ